

մագուժարը հաւատացած է, որ խորհրդարանը չի ուշանար իր որոշումը տալու հայութեան համար խիստ կարեւոր այս խնդրի մասին»:

Համագումարը բանաձեւեր հանեց և արեւմտահայ նախկին մարմիններին հաշւեյարդարի ու ներգաղթի մասին: Առաջինը ասում էր.

«Արեւմտահայ Բ. Համագումարը՝ լսելով հաշւեյարդար յանձնաժողովի գեկուցումը արեւմտահայ նախկին մարմիններու մասին և տեսնելով, որ անոնք կազմալոյծ վիճակի մը մէջ կը գտնւին շնորհիւ այն հանգամանքին, որ 1918թ. մայիս ամսէն ի վեր ոչ մի տեղ չեն յաջողած մեծամասնութիւն կազմել, իրենց ընտրողներուն հաւաքել և իրենց տնտեսական-բարոյական գործունէութեան հաշիւը ներկայացնել, ինչպէս նաեւ շնորհիւ այն հանգամանքին, որ ոչ միայն իրենց ընտրողներու մօտ չեն վերադարձած և Բ. Համագումարին չեն ներկայացած, մի բան, որ ըստ ամենայնի անոնք հնարաւորութիւն ունէին ընելու, այլ և միայն 2—3 հոգիի համաձայնութեամբ յանձն են առած արեւմտահայ փախստականութեան հանդէպ այնպիսի պարտականութիւններ կատարելու, որ երբեք իրենց վրա դրած չէ եղած, անոնց գումարները անձնական պատասխանատուութեամբ զանազան գործերու յատկացնելով, մի բան, որ ո՛չ Համագումարը, ո՛չ կոնֆերանսը և ոչ ալ խորհուրդները չէին թոյլատրած: Արեւմտահայ Բ. Համագումարը, որպէս Հայաստանի Հանրապետութեան սահմաններու մէջ ապաստանած փախստական ներկայացուցչութիւնը՝ կը յայտարարէ նախկին խորհուրդները լուծւած՝ պահանջելով բարոյական և նիւթական հաշւետւութիւն իրենց ամբողջ գործունէութեան վերաբերմամբ թէ՛ հաւաքականօրէն և թէ՛ անձնապէս»:

Ներգաղթի համար «Համագումարը կը հրահանգէ ընտրելիք մարմինն այժմէն անհրաժեշտ միջոցներու ձեռնարկել պատմական Միացեալ Հայաստանի կառավարութեան մօտ և դաշնակիցներու ներգործօն միջամտութեամբ և անվճարութեամբ պետականօրէն ապահովել ներգաղթող ժողովրդի ֆիզիքական գոյութիւնը և պարենաւորման անհրաժեշտ պայմանները, ինչպէս նաեւ անոր հետեւող վերաշինութեան գործի իրականացման անհրաժեշտ տւեալները հաւաքել»:

Ի վերջոյ, փետր. 13-ի նիստում, դադարի քէարկութեամբ ընտրեց «Արարատեան Հանրապետութեան մէջ ապրող արեւմտահայ հատուծի Գործադիր Մարմին»՝ բաղկացած հետեւեալ 9 անձերից: Սմբատ Բորոյեան, Խաչ. Պոնափարթեան, Ար. Սասունի, Գր. Բուլղարացի, Վար. Տէրոյեան, Ռուբ. Դրամբեան, Վահագն Քրմոյեան, Վաղ. Յոխիկեան, և Արս. Կիտուր: Գործադիր Մարմնի համար մշակեցին հետեւեալ հրահանգները.

«I. Նա կիրականացնէ համագումարի որոշումները:

II. Կը շարունակէ մնալ իր ստանձնած պարտականութիւններու և իրաւասութեան մէջ մինչև Միացեալ Ազատ Հայաստանի պետական-օրէնսդրական հաստատութիւններու իրականացումը՝ հայութեան միւս հատուծներու՝ Պօղոս Նուպարի կաբինետի, Արարատեան Հանրապետութեան կառավարութեան և խորհրդարանի գործակցութեամբ և համաձայնութեամբ:

III. Բացառիկ և համազգային արժէք ներկայացնող ու է դէպքի առթիւ կը հրաւիրւի սոյն համագումարն իր լրիւ կազմով՝ Գործադիր Մարմնի անդամներուն մէկ երրորդին կամ համագումարի անդամներու կէսէն աւելիի պահանջմամբ: